հայրենիքը վերադարձան ։

«Թէ՛ բնակչաց և թէ՛ տեղական հառաջդիմութեան հետ խիստ սերտ են. իրենց նախագահը Պ. Ատամս խոհեմ ու բանիբուն անձ մը ըլլալով, ամենուն համակրութիւնը ստացած է. իր քաղաքագիտութեամբն ու ճարտարխօսութեամբ և ամենայորդ վարմունքովը թէ՛ մեծին և թէ՛ պզտիկին, թէ՛ հարուստին և թէ՛ աղքատին սրտին մէջը տեղ գտած է ։ Վերջապէս ուրախ եմ ըսելու՝ որ այս առաջին մէկ տարուան մէջ այս երկրին մէկ մասը փոքր ի շատէ ինչպէս կը յուսայինք յառաջդիմութիւն ստացաւ յիշեալ աշխատասէր գաղթականաց միջոցաւ, և յուսամ եմ որ օր քան զօր յառաջանալու դիւրութիւններ պիտի կարենայ գտնել ։

«Ամսոյ 5/17 ին, (կը յարէ մեր Թղթակիցը,) ի նաւահանգիստս հասան Ամերիկայի Բուէբըր Սիմի շոգենաւը, որով ուղեւորներ չափ հարուստ Ամերիկացիք աշխարհիս գլխաւոր ու նշանաւոր տեղերը պտըտելու եկած են ։ Այս ճանապարհորդներէն ոմանք Պէրութէն՝ Դամասկոսի վրայօք և ոմանք Հայֆայէն՝ Նազարէթի և Նապլուսի վրայօք սուրբ Երուսաղէմ եկած են. իսկ մնացեալներն ալ ուղղակի շոգենաւով Յոպպէի նաւահանգիստն եկան աւելի դիւրութեամբ պտըտելու Երուսաղէմ և ուրիշ նշանաւոր տեղերը ։ Ասոնց մէջն է Տօքթօր Վիլէեմ Կլարան հռչակաւոր քաղաքագէտը, որ Ամերիկայի Միացեալ Նահանգաց կառավարութենէն Ասիոյ, Եւրոպիոյ և Ափրիկէի քննիչ և գործակատար անուանած է ։ Այժմ Ամերիկայի փոքր Ֆրէկատ մ՚ալ կը գտնուի նաւահանգիստս Պօլիսէն գալով ամսոյ 13/25. որոյ անունն է Սքանտանա, և ասկէ ի Պէրութ երթալու է »։

Վերյիշեալ Ամերիկացիք եկան ի սուրբ քաղաքս և հարկաւոր տեղերը պտըտելէն յետոյ, ամսոյ 18 ին դարձան ի Յոպպէ, ուսկէ պիտի երթան Աղեքսանդրիա, և անկէ Մալթա, Ճիպրալթար և Սպանիոյ ուրիշ մէկ քանի նաւահանգիստները հանդիպելէն յետոյ պիտի վերադառնան ի Նիւ Եօրք, ուսկէ որ եկած են.

## ՆՈՒԻՐԱՏՈՒՔ

Սուրբ Աթոռոյս Թանգարանին և տպարանին Տեառ. Հ. Աբէլ. Մաթէոս վարդապետն անցեալ ամսոյն մէջ ի Պօլիս ըրած ճանապարհորդութեան առթիւ, բարեհաճած է աստղաբաշխական գեղեցիկ գիտակ մի Թանգարանին նուիրել Մեծապատուի Միսաք Առաքել պէյն Յ. Տատեան ։ Նոյնպէս երկու կտոր հին ժամանակէ մնացած զէնքեր, որոնց մէկն է պղպատեայ կացին և միւսն շերտաւոր երկաթի ձեռով զէնք մի, երկուքն ալ ոսկեհնար գծերով դրոշմուած ու քանդակուած ։ Այս զէնքերս նորին Մեծապատուութեան ծախիւք ի Փարէզ փոխադրութիւն սարփող յարգոյ պարոն Պէնտէրեանը Փարիզէն ետ դառնալուն Եգիպտոս հանդիպելով, հոն իր բարեկամին մէկին իրեն կըշնորհէ. և պարոն Պէնտէրեան պանովք իբրև պատուական և հայրենի հնութիւններ իր բարեկամին պարգեւած ըլլալով, այս անգամ այն բարեպատեհ առթիւ Մեծապատիւ աղագաւէր Պէյը պանովք եւս Թանգարանիս կընուիրէ ի յիշատակ Պարոն Պէնտէրեանի, որոնց համար կը պատուաւորենք հրապարակաւ շնորհակալութի յայտնել ի դիմաց Թանգարանի Տեսչութեան ։

— Նոյնպէս ընծայեց երկու տարի յառաջ ի Հալէպ բնակող Մեծայարգ Յովհաննէս աղայն Գիւրքճեանօֆ 5–6 կտոր ձեռագիր գրեանք խրկած էր Թանգարանիս համար, որոնց մէջ երկու կտորն է Նոտա Աշխարհութերուած գիրքը. ասոնց համար եւս Թէպէտ և անդաման, բայց երախտագէտ սրտիւ կը յայտնէ իր շնորհակալութիւնը ։



digitised by A.R.A.R.@